

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-4-4-Ա

ք. Երևան

24.03.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի մարտի 24-ի նիստում քննարկեց 2022 թվականի մարտի 7-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ «Limited Liability Company "SOFTPROTRADING"» ընկերության (սլ. Montazhnaya, 9, str. 1, et. 3, pom. IV, kom. 12 RU-107497 Moscow, RU) «SmartPack» (IR1554638) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «SmartPack» նիշը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «խելացի փաթեթ» չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն նկարագրական բնույթի նիշ է, այն է՝ ուղղակիորեն մատնանշում է, որ փաթեթը իրականացնում է որոշակի ֆունկցիաներ: Տարբեր ֆունկցիաներ իրականացնող «Smart packaging» փաթեթները ներկայումս լայնորեն օգտագործվում են միջազգային շուկայում, որոնց մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է <https://www.youtube.com/watch?v=cTWWUdYGOOo> կայքում: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «SmartPack» նիշը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «խելացի փաթեթ» չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն նկարագրական բնույթի նիշ է, այն է՝ ուղղակիորեն մատնանշում է, որ փաթեթը իրականացնում է որոշակի ֆունկցիաներ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն:

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված «SmartPack» (IR1554638) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ